

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 17 » 09 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0175-21

**Ձեռնարկողը՝**

**«Հայնախագիծ» ԲԲԸ**


ք. Երևան, Չարենցի փողոց 1 շենք

**Գործունեությունը՝**

**Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի «Նաիրի  
բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման նախագծի  
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ**

Կոտայքի մարզ, ք. Եղվարդ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0175-21

< 17 > 09 2021թ.

Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի «Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

« Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

ք.Երևան, Չարենցի փողոց 1 շենք

Ներածական մաս. Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախատեսվում է հատկացված հողամասում նախագծել /տեղակապել լրացումներով և փոփոխություններով / Վայոց ձորի մարզային եվ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնների համար մշակված տիպային, մոդուլային նախագիծը: Նախագծային փոփոխությունները կապված են ընտրված տեղանքի ռելիեֆի եվ բժշկական կենտրոնի կազմի ու ծավալների փոփոխության հետ: ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) նոր բժշկական կենտրոնը նախատեսվում է կառուցել գոյություն ունեցող բժշկական կենտրոնի տարածքում: Տվյալ տարածքում գոյություն ունեն քանդման ենթակա կառույցներ: ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (նաիրի) բժշկական կենտրոնում միավորված են հիվանդանոցային եվ պոլիկլինիկական ծառայությունները: Բժկական կենտրոնում տեղակայված են բժշկական հետեվյալ ծառայությունները՝

- Ընդունարան եվ անհետաձգելի բուժօգնության ծառայություն 2 մահճակալով
- հնտենսիվ թերապիայի սրահ 3 մահճակալով
- արյան փոխներարկման բաժանմունք
- ախտորոշիչ եվ լաբորատոր բաժանմունք
- պոլիկլինիկական ծառայություն
- շտապ բուժօգնության կայան 1 հերթապահ բրիգադի հաշվարկով
- 30 ստացիոնար մահճակալ ունեցող հիվանդանոցային ծառայություններ
- թերապևտիկ ներառյալ մանկաբուժական 13 մահճակալ




- վիրաբուժական 10 մահճակալ
- ինֆեկցիոն 2
- մանկաբարձագինեկոլոգիական 5 մահճակալ

Բժշկական կենտրոնի մուտքը նախատեսված է Չարենցի փողոցից, որտեղից կազմակերպված է շրջանցող ավտոճանապարհ, մուտեցում դեպի շտապօգնության ընդունարան եվ հետիոտն մուտեցում դեպի հիվանդանոցի գլխավոր մուտք: Բժշկական կենտրոնի կառույցը բաղկացած է մեկհարկանի 6 մասնաշենքերից: Հիմնական մասնաշենքում են տեղակայված ընդունարանը և անհետաձգելի բուժօգնության ծառայությունը, ինտենսիվ թերապիայի սրահները, վիրահատական բլոկը 2 վիրասրահներով, ախտորոշիչ եվ լաբորատոր բաժանմունքը: Մասնաշենքին հարում են տարբեր բաժանմունքների մասնաշենքերը, որոնք իրարից բաժանվում են կիսապարփակ կանաչապատ բակերով: Պոլիկլինիկան, գտնվելով ֆունկցիոնալ և ծավալատարածական մեկ ամբողջական համալիրում, անջատված է ադմինիստրատիվ մասնաշենքից հետիոտն ելանցով, որը տալիս է հնարավորություն կազմակերպել հարմար մուտեցում եվ դեպի պոլիկլինիկա և դեպի հիվանդանոցի գլխավոր մուտք: Նախագծված են նկուղային տարածքներ մասնաշենքերի տակ, որոնց նպատակային օգտագործումը ըստ առաջադրանքի կտրվի ապագայում՝ ըստ անհրաժեշտության: 2 ներքին աստիճանավանդակները կապում են հարկը նկուղի ու ծպեղնահարկի հետ: Ծպեղնահարկում են տեղակայված սպասարկող ինժեներական սարքավորումները: Կազմակերպված են էվակուացիոն ելքեր 1-ին հարկի միջանցքներից, նկուղային հարկից: Ներքին հարդարման համար օգտագործված են ժամանակակից համապատասխան նյութեր: Արտաքին պատերը երեսպատված են բազալտի, տրավերտինի եվ տուֆի սալերով: Տանիքը լանջավոր է մետաղական հիմնակմախքով և փայտե կավարամածով, մետաղական կղմինդր թերթասալերից: Նախատեսված են թեքահարթակներ՝ ապահովելով անհրաժեշտ հարմար մուտեցում հիվանդների եվ շտապօգնության մեքենաների համար: տարածքը բարեկարգված է և կանաչապատված: Առանձնացված են հիվանդանոցի կանաչապատ տարածքները, անցուղիները, կարգավորված են այցելուների հոսքերը, հիվանդների ընդունումը, գլխավոր և օժանդակ կառույցների տարածքները: Գլխավոր մուտքին կից կազմակերպված են ավտոկայանատեղեր: ավտոկայանատեղեր են նախատեսված նաեվ տարածքի հարավային և արեվելյան հատվածներում: Տարածքի հյուսիս-արեվելյան հատվածում տրանսֆորմատորային կայանին կից տեղադրված են կաթսայատունը, հեղուկ վառելիքի ստորգետնյա պահեստարանը, չիլլերի հարթակը, տրանսֆորմատորային ենթակայանն ու դիզել գեներատորը: Տարածքի հյուսիս-արեվելյան հատվածում նախատեսված է երկրորդ մուտքը նաեվ օժանդակ կառույցների սպասարկման համար: նախատեսված են բոլոր անհրաժեշտ ինժեներատեխնիկական կահավորումն ու սարքավորումները

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Բժշկական կենտրոնի նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքում գործող բժշկական կենտրոնի տարածքում: Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բժշկական կենտրոն: Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 29696.3 քմ, գոյություն ունեցող և պահպանվող կառույցների և շինությունների կառուցապատման մակերեսը՝ 1764.80 քմ, նախագծվող կառույցների



շինությունների կառուցապատման մակերեսը՝ բժշկական կենտրոն 4394.80 քմ, օժանդակ կառույցներ 145.60 քմ, ճանապարհներ, անցուղիներ, ավտոկայանատեղեր՝ 4662.30 քմ, մայթեր եվ եզրամայթեր 1238.30 քմ, կանաչապատ տարածքներ 8145.70 քմ:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման համար, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր: Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85\* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36,0 ամիս կամ 3 օրացուցային տարի շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից: Բժշկական կենտրոնի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է միանալով Եղվարդ քաղաքի համանուն ցանցերին՝ համաձայն տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը կիրականացվի տարածքից 80մ հեռավորության վրա անցնող D=150մմ ջրագծից, իսկ ջրահեռացումը՝ D=250մմ կոյուղատարին, որի համար սահմանված կարգով կստացվի տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոդիստեռներով՝ Եղվարդ քաղաքի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի միանալով Եկ « Եղվարդ» 35/10 բջ.3 10կվ թիվ 30 հենասյունից, որի համար սահմանված կարգով կստացվի տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Բժշկական կենտրոնի գազամատակարարումը 100խմ/ժամ ծախսով հնարավոր է իրականացնել Եղվարդ քաղաքի Ե.Չաչենց փողոցի ներքին ցանցից:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային և բնության հուշարձաններ:

**Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

Բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն՝մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ, փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով:



աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների, կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:


Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը: Շինարարական հրապարակում ապահովել սանիտարահիգիենիկ, կենցաղային հանգստի, ընդմիջման հարմարություններ: Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**Պատճառաբանական մաս.** Կոտայքի մարզի Եղվարդի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», Կոտայքի մարզապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



- Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 1-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

- Շինարարական աշխատանքների ընթացքում պահպանել առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ դպրոցի շահագործման ընթացքում 2017թ. մարտի 27-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,

- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,

- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,

- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

« Հայնախագիծ» ԲԲԸ կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի «Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Կ. Հարությունյան